



Ա Ր Ա Ր Ա Տ Ս

ԹԻՒ Զ. — ՇԻ ԶԱՆ ԺԲ.

ՏԱՐԻ ԺԲ. — ՑՈՒՆԻՍ 1.

ՆԱԽԱՍՅԱՀՄԱՆՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՎԵՐԻՆ ՏԵՍՉՈՒԹԻՒՆ:

Այս, ամիսները անց են կենում մինը միւսի ետեւից մեր ցաւերի եւ յսյօների վերայ: Անընդհատ եւ անփոփոխ կարգով փոխվում են տարւոյ ժամանակները: Հինը դարձեալ նորանումէ, նորը հնանում: Առաջուան տարիների գործերը անց են կենում, գնում, ինչպէս որ մարդկային ազգի այն սերունդները չեն մընում աշխարհիս վերայ, որ այդ գործերը արել են: Ուրիշ մարդիկ են գուրս գալիս աշխարհիս երեսը նոյնպէս չմնալու եւ մոռացուելու համար: Միշտ մի եւ նոյն կարգն է, մի եւ նոյն կերպն է, մի եւ նոյն կարգով ու կերպով ամենայն բան գալիս է ու գնում, առաջուան կարգն ու կերպը միշտ պահպանվում: ամենայն բան իւր հաստատ ու անփոփոխ ճանապարհն ունի, որով պիտի գնայ առանց ծռելու, ամենայն բան իւր հաստատ ու անփոփոխ նպատակն ունի, որին պէտք է դիմէ: Ամենայն բան մի հաստատուն օրէնքի տակ է, ինչպէս երկնքի աստղը, նոյնպէս եւ դաշտի ծաղիկը. ինչպէս մի ամբողջ ազգ, այնպէս եւ մի անհատ մարդ, որ աշխարհ է ծնել: Ոչ մի բան ուրիշ կերպով չէ կարող լինել, քան թէ է. ոչ մի բան աշխարհիս երեսը ուրիշ կերպ կլինի, քան թէ պէտք է լինի: Այս է ահա նախասահման-նի-նը, այս է վէրէն ունչ-նի-նը:

Ի՞նչպէս. ուրեմն ամէն բան առաջուանից ի յաւիտենից որոշուած, պրծածէ: Ուրեմն ոչ մի ծաղիկ չթառամի՞ր, ոչ մի ծիծի երեխայ լաց չլի՞նիր, ոչ մի ժայռ շուռ չգա՞ր, ոչ մի ազգ աշխարհիս երեսից չնրբուիլ, չոչնչանալ առանց այն կարգին, օրէնքին, որով, ով գիտէ, ինչ ժամանակուանից այդպէս որոշուած էր, որ լինի: Ուրեմն, ես այս մի ամբողջ բան կազմող աշխարհիս երեսին, արեւում հազիւ աչքի երեւող փոշիի կտորի՞ն ման մի բան եմ, որ օդում լոզալով շարժումէ, ոչ թէ այնպէս, ինչպէս ինքն է կամենում, այլ ինչպէս պէտք է շարժի, ինչպէս որ պէտք է այս կողմն, այն կողմն տարուի ու բերուի, գնայ ու գայ: Եթէ, ինչ որ լինում է, ինչ որ պատահումէ աշխարհիս վերայ, առաջվանից, ի յաւիտենից որոշուած, սահմանուած է, ինչի՞ է պէտք ուրեմն եւ ի՞նչ է մեր ալս քաշելը, մեր ցանկութիւնը, մեր ձգտումն լաւ բանի համար, ինչի՞ համար է ուրեմն մեր ազօթքն եւս, ի՞նչ պէտք է անի մեզ մեր արտասուքն ու Աստուծոյ արած աղաճանքը: Միթէ այս մեր ազօթքն եւս վերին տեսչութեան կարգադրութեան մէջ որոշուած, սահմանուած չէ առաջուանից: Ուրեմն ես մի մեքենայ եմ միայն, որ այս մի ամբողջ մեծ բան կազմող աշխարհի մէջ նորա համար եմ գտնվում, ապրում, որ իւր խաղալու խաղը յառաջ գնայ: Եւ իմ կարծած աղատ կամքս, թէ ունի մարդս, մի ինքնախաբութիւն է միայն, ուրիշ ոչիշնչ:

Ի՞նչ է նախասահմանութիւնը: — Աշխարհի այն հաստատուն, ահագին մեծ, մշտատեւ ու անվերջ կարգն է, որով ամենայն բան իրեւ պատճառ ու գործողութիւն, գործ միմեանց ետեւից են գալիս հարկաւորապէս, մինը միւսից գուրս գալով: Ամէն մի գործողութիւն եւս պատճառ է լինում մի ուրիշ, մի նոր գործողութեան կամ գործի: Ծառը յառաջ է բերում սերմն, սերմն նորէն յառաջ բերում ծառեր: Որովհետեւ իմ պատճեկութիւնս այնպէս էր, ինչպէս որ էր, ուրեմն ես եւս այն պիտի լինէի, ինչ որ եմ այժմ: Անցած տարւոյ դիպուածներից յառաջ եկան, ինչ որ այս տարի լինումէ: Վաղուց անցկացած, գնացած, մոռացուած հարիւրաւոր տարիներում եղած պատահած բաները, եթէ չինէին, մենք մեր ժամանակին, մեր օրերում եղած իրողութիւններին խելք հասցնել չէինք կարողա-

նալ ու մեր համար անհասկանալի կլինէին։ Այսպէս ամենայն բան սկզբից մինը միւսի հետ կապուած է մի շղթայի նման, եւ այս կապակցութիւնը, կապը, որ կայ, գնումէ, հասնումէ անվերջ ապագային։ Այս մեծատարած անչափելի ու անբաւ աշխարհիս գործի մի անիւը միւսին վերայ է ներգործում; միւսին շարժում։ չափի ու համրանքի տակ յընկնող այս աշխարհիս գործերի մի բաժինը միւսի մէջ ունի իւր կախումն։ ամենայն բան հաստատուն, անփոփոխելի կարգով, օրէնքովէ։ Խնչպէս որ նո, որ մի խաղաղ ծովի հայելիի նման պարզ ջրի մէջ քար է ձգում, առաջուանից գիտէ, որ քարը ջուրը ընկնելուց ձայն պիտի դուրս գայ, յետոյ ջուրը խօկոյն պէտք է շարժի ու գլոր գլոր ալիք ձեւացնէ, որ քանի կգնան, կմեծանան, կտարածուին ու մինչեւ հեռաւոր ափերը կգնան հասնին, մինչդեռ մէջտեղումը, ուր որ շարժումն ոկոել էր, ջուրը արգէն հանդարտել է, այսպէս եւս կարող կլինէր մարդու, որուն յայտնի լինէր աշխարհումն գտնուած ամենայն արարածների որպիսութիւնը, աշխարհիս իրողութիւնները, որ պիտի լինէին հազարաւոր տարիներով յետոյ։ առաջուանից կարող կլինէր, ասումեմ, իմանալ այն առաջին շարժող պատճառից, որ եղել է հազարաւոր տարիներով յառաջ եւ դարձել է պատճառ այդ իրողութիւնների յառաջ գալուն այդպիսի հեռաւոր յետուայ ժամանակներում։ Բայց ոչ մի հողեղէն եւ մահկանացու մարդու այդպիսի ամենագիտութիւն տուած չէ։ Այս պատճառով մարդս շատ բան չգիտենալով, շատ բանի խելք չհասցնելով, տարտամ մոքով ու տարտամ քայլերով գնումէ այս աշխարհիս կեանքի սաստիկ խառնաշփոթ ճանապարհով ու չգիտէ, թէ ինչեր եղած են յառաջ ու ինչ պիտի լինի յետոյ։ իրան պատահած բաներին, երբեմն բաղդ է ասում երբեմն պատահմունք, երբեմն անխուսափելի, անհրաժեշտ կարեւորութիւն, այսինքն այնպիսի բան, որ անհնարին է չլինի։ Բայց նա այն բանն է գիտուած կամ պատահմունք իմանում, կամ համարում, որոյ անմիջական պատճառուներին խելքը չէ հասնում։ Ոչ մի բան չկայ, որ ինքն իրան եղած, յառաջ եկած լինի, որովհետեւ ամենայն բան իւր պատճառն ունի։ Ամենայն բան կարեւոր է, ամենայն բան տեսչութեան յաւիտենական

վճռի մէջ կայ ու կարգադրած է արդէն:

Ամենայն բան . ուրեմն այս ահագին մեծ աշխարհս ու ինչ որ սօրտ մէջ եռումէ ու շարժում, մի հրաշալի ու սկիզբն անյայտ մի գործ է, որոյ մէջ միայն այն բանը կարող է լինել ու պատահել, ինչ որ երկնային ձարտարապետի կամքը նախատեսել է ու որոշել: Ես ինքս եւս ուրիշ մի բան չեմ ուրեմն, բայց եթէ մի չնչին մասն այս իրաւի մեծ շինութեանս, մեծ տանս մէջ որ տշխարհս է: Ես սարսափումեմ: — Ի՞նչպէս մինակ, անտէր, իմ գլխիս մնացած մի բան եմ ես, իմ ուրախութիւններովս ու ցաւերովս ամենայն բաների համար արդէն սահմանուած այս հաստատուն ու սառն կարգի մէջ, որ երկաթի նման սառն է ու պինդ եւ ամենեւին չծռիր. ինչպէս խեղճ, անբաղդ բան եմ ես ուրեմն այս անկեանք, անկամք կերպարանքների մէջ: Ինչո՞ւ համար այս կեանքովս ամենայն տեսակ զգացումներ ունենամ: սիրոյ զգացմունք լինի սրտումն, որ մի բան իմ սիրոյս արժանի չէ: Ինչո՞ւ համար է ատելութեան զգացումն ունենալս, եթէ որ ամենաչար բանն եւս, մինչեւ անգամ մոլութիւնը անպատճառ հարկաւոր բան է աշխարհիս մէջ եւ պէտք է անշուշտ լինի: Ինչո՞ւ համար է ուրեմն իմ զզջալս այն սխալների մասին, որ մաքումս գրել էի անելու, ինչի՞ս է հարկաւոր մեղքը ատելս, թէ որ, ով գիտէ երբուանից արդէն, վիճակուած է ինձ, որ ես այդ մեղքի մէջընկնեմ: Եւ թէ որ այդ մեղքին ընծայուած, նուիրուած եմ մի մատաղացուինման: Մի՞թէ յիրաւի այսպէս է իմ կեանքս, իմ վիճակս, իմ գրութիւնս այս աշխարհիս մէջ, այսպէս պիտի ապրիմ յիրաւի եւ այս կերպի անցկացնեմ:

Չէ, չէ . այսպէս ամենեւին չէ կարող լինել, որովհետեւ իմ մէջս ամենայն բան հակառակն է խօսում մոքիցս անցկացած այդ ամենայն բաներին, այդ կերպի մտածմունքիս. իմ զգացմունքներս գլուխ են քաշում ամենայն ուժով ապստամբելով այդպիսի մոքերից, ու երբէք ամենեւին յօժարել չեն կարող: Որոշ կերպով կզգամ ես իմ ազատ կամք ունենալս. եւ թէեւ իմ մարմինս մի անկենդան գործիքի եւս նման լինի, իմ հոգիս, իմ բանական հոգիս մեքենայ չէ . նա կենդանութիւն տուողն է, որ իւր սեպհական մտածողութիւնովն ու դատողութիւնով մոքի որոշումներ է անում: Ոչ. աշխարհս մի մեռած, պաղ-

դանդուած չէ, այլ մի կենդանի եւ կենդանարար Աստուած իւր սիրովն զօրութիւնովն ու բարութիւնովն ներգործումէ ամենայն բանի մէջ, կեանք է տալիս ամենայն բանի եւ երջանկացնումէ ամենայն բան։ Ես մասձումեմ թէ ինչ պիտի լինէր աշխարհս առանց Աստուծոյ, առանց սիրոյ, առանց իրաւանց, առանց աղաւութեան, առանց վարձատրութեան։ Մի ահագին դի, մի հրաշալի մեծ ու այլանդակ մեռած մարմին, որոյ մէջից հոգին գուրս է եկել, չկայ. ամենայն արարածների մի անզգայ խաղ, որոյ մէջ վսեմ ու փառաւոր բանի, առաքինութեան, սիրոյ ու կատարելութեան միայն անուններն կլինէին առանց իրականութեամբ։ Մի թշուառ, աննաղատակ, անլուծանելի ու անվերջ հանելուկ կլինէր։

Խոն է Ալեքսանդր-Նէ-ն, Խոն է Նախառահանու-նի-ն։ Աշխարհիս հաստատուն եւ սուրբ կարգն է, որով ամենայն բան հարկաւորապէս իբրեւ պատճառ ու ներգործութիւն միմեանց ետեւից են գալիս։ Ինչ որ այսօր լինումէ, անցեալի հարկաւոր հետեւանքն է, եւ ինչ որ եմ ես այսօրուան օրս, անցած օրերի բերելու պտուղն է։

Կամենումեմ բոլոր աշխարհս խելքի տակ ձգել իւր ամէն մի կողմից։ Ստեղծուած բանների մէջ տեսնումեմ, որ անկենդան քարից ոկասած մինչեւ ամենից գերագոյն արարածը, ամէնի մէջ կան անվերջ ու զարմանալի շատ ուժեր. ինչ որ կայ, ինչ որ գտնվումէ աշխարհիս երեսին, ինքն իրան համար մի ոյժ է եւ ներգործումէ իւր չորս կողմում եղած արարածների վերայ։ Անկենդան ժայռի մէջ եւս կայ անժերի ոյժ լիովին, որովհետեւ ով գիտէ որ ժամանակներից այնպիսի ձեւ ու կերպ է ստացել, ինչպէս որ այսօրուան օրս կայ. այժմ եւս նա իւր ձեւերը փոխումէ. անդադար իւր ներգործութիւնը անումէ ամբողջի կապակցութեանը վերայ։ Ինչպէս որ մարդոյս կենդանի մարմնի ոսկրները մարմնի շէնքը կըողներն են, այսպէս եւ երկրիս խորքի ահագին ժայռերը երկրիս մարմնի շինուածը տանողներն են եւ երկրիս երեսը բիւրաւոր տեսակ յատկութիւն ու աճում ունեցող անդամներ կամ կտորներ որոշողներն են Եւ ո՞քան աեսակ բազմաթիւ արարածներ կան, որ մեր մոլորակիս կամ երկրիս երեսին կապրին, ու ինչ ինչ տեսակ

իրանց գործակատարութիւններովն, որ պիտի ունենան իրանց համար սահմանուած յաւիտենական օրէնքներին համեմատ։ Երկրիս այլեւայլ տեսակ արարածների մէջ զարմանալի աստիճաններ կան, ցած ու բարձր Բոյսի կեանքի ու կենդանութեան գորութիւնը շատ աւելի բարձր է, քան թէ քարի ունեցած ոյժը, որով կապրի ու կայ աշխարհում։ վասն զի բոյսը շատանումէ ինքն իրան, իւր տղայութիւնը, իւր կատարեալ հասակը, իւր աճումը, շատանալը ունի Աւելի բարձր է կեանքի ոյժը կենդանիներում, նոցա կենդանական հոգու մէջ. վասն զի կենդանին ունի զգակ, ընարել եւ որոշումն անել։ Շատ աւելի բարձրէ մարդկային հոգու գորութիւնը, որ պարզ ու պայծառ գիտակցութիւն, ճանաչումն ունի. բայց այս ամէն կարգի ու աստիճանի արարածներն միմեանցից բաժանուած, ջոկ ջոկ իրանց համար ապրող խումբեր չեն։ Մի շունչ, մի հոգի է, եւ միմիայն կառավարող կամք նոցա ամենի մէջ, տեսակ տեսակ ուժերը, գորութիւնները, որ ամենայն արարածներ ունին, ստացած են մի յաւիտենական Զօրութեան սկզբնական աղբիւրից, առանց որոյ ոչ մի բան չէր լինէր աշխարհում, ինչ որ կայ, եւ միայն մեր աչքին ու մեր նկատողութեանը այնպէս կերեւի, որ տեսակ տեսակ գոյութիւն ու կեանք ունեցող արարածները այլեւայլ որոշ օրէնքների տակ են։ Զգողական գորութիւնը, որ մագնիսն ունի իւր մէջ, կեղրոնախոյս գորութիւնը, որ ովկիանոսի հոսանքները քշումէ, տաքն ու ցուրտը, որ օդի շրջանը այս եւ այն կերպով շարժեցնումէ, բոյսերի եւ կենդանիների գուգաւորուելու ձգտումն, զարմանալի բնազգումն, որ մենք, օրինակ, շան մէջ տեսնումենք, եւ վերջապէս հոգւոյ ու մոքի բարձրը գորութիւնը, որ մարդիս տուած է, — այս ամէնը աշխարհիս նոյն այլեւայլ կերպ կեանքի երեւոյթներն են, վերին տեսչութեան ամենայն արարածների համար եղած նախասահմանութիւններն են։

Բայց ի՞նչ է աշխարհի կեանք ասածդ. ի՞նչ է վերին տեսչութիւն, կամ նախասահմանութիւն։ Երկրաւոր խելքը զուր է աշխատում տեղծման սրբավայրի ամենախորերը մտնել. ամէն տեղ իւր առաջին կտեսնի պղնձի սահմաններ, պատեր, որ նորա քննութիւնները կկանգնեցնեն ու չեն թողնիլ յառաջ

տանելու: Բայց մարդիս մտքի ու սրտի մէջ կայ մի ճանաչումն ու զգացումն, որ երբէք նորա մէջը չէ հանգչում, թէ կայ մի եռթիւն, որ այս ամէն կեանք ու կենդանութիւն ունեցող արարածները կառավարում է, որ ինքն կեանք է եւ լոյս, որ ամէն բան ստեղծել է, ամենայն բան պահպանում, յառաջ տանում: Այս էռթեանը մենք երկիւղածութեամբ անուն ենք տալիս Աստուած: Երկինքը պատմում է նորա փառքը եւ երկիրս յայտնում է նորա ձեռքի գործը: Աշխարհիս ոկիզբները աղգից աղգերի մէջ, հագարաւոր բերաններում կայ ու կայ, քանի որ մարդու կուրծքի մէջ սիրա է խփում: Ինչ որ առաջուայ աշխարհում մութ ճանաչումներ, թոյլ զգացումներ էին, մեր սեռի ամենամեծ մարդը, Յիսուս Քրիստոս այնպիսի պարզ ու որոշ կերպով յայտնեց, որ լուսի պէս պայծառ պէտք է մնայ, որքան եւս որ փոխուին ժամանակները, որչափ եւս որ փոխուին մարդոց ճանաչողութիւն ու հասկացողութեան կերպերը: Նորա խօսքից իմանումենք, թէ ինչ է մեզ պէտք, որ մեր գերագոյն նպատակին հասնելու համար քաջութիւն ունենանք, վեշտերի մէջ միսիթարութեան եւ մահուան ժամանակը՝ յոյս նորա տուած ուսումի լուսովը ճանաչում ենք մենք աշխարհի ձեւակերպութեան աստուածային լինելը, որչափ որ վերաբերութիւն ունի մեզ ու մարդկային աղգին: Ինչ որ այսչափից գուրս է, պէտք է մեզանից ծածկուած մնայ, քանի որ այս մարմնիս մէջ ենք այնտեղ միայն, վերեւումը, մեր երկնաւոր Հօր տան ուրիշ օթեւաններում յոյս ունինք պարզ ու պայծառ կերպով տեսնելու, ինչ որ այս աշխարհումն կիսատ ու անկատար կերպով գիտենք:

Այսպէս գիտենք մենք, որ Աստուած իւր անհուն իմաստութիւնովն ու սիրով այս երկրագունդս ստեղծել է, որիւր մարդկային զաւակների բնակութեան տեղը յինի: Բնութեան ամենայն ուժերը միասին պիտի ներգործեն, որ դուրս բերեն այն, ինչ որ մեր քարօրութեան համար է, երկիրս վերայ եղած կեանքի ամենայն շարժումները, օգնու ջուրերը մի մեծ նպատակի են միայն ծառայում, այս է որ քանականութիւն ունեցող մարդկային սեռը գէտ ի հոգեւոր կատարելութիւն տանին եւ

այդ կատարելութեան համար պատրաստեն։ Եթէ որ բնութեան, մեր լիճակի մէջ, աշխարհիս պատահմունքների մէջ կան այն պիսի խելք չհասնելու բաներ, որ մեզ համար գժուար հանելուկների նման են մնում, բայց եւ այնպէս աշխարհիս պատահմունքների գումարը մենք հասկանում ենք սուրբ գրքի մէջ, որ ասումէ թէ, Աստուած սիրողների համար ամենայն պատահած բաները ի բարին են։ Ամենաբարին Աստուած կամցաւ, որ ամենայն արարածներին բարի լինի, «Ն մէ կարօպասնեն, պահանջնեն լունենան ու աշնայն ինքուլ գոհ ապրին։ Սորա համար աշխարհիս ընթացքի մէջ աստուածային հայրական քաղցրութիւնովն ու խնամքով մինչեւ անգամ ամենայն որդնի համար հոգացողութիւն եղած է, իսկ մարդիս բանական հոգուն գերագոյն երջանկութիւն պարգեւած է։ Որդն ցաւ է զգում, երբ որ իւր բնութեան օրէնքները խանգարուած են։ Նոյնպէս եւ մարդիս բանական հոգին ինքն իրան զուրկ է տեսնում իրան համար սահմանուած երջանկութիւնիցն, երբոր իւր երջանկութեան օրէնքները անկատար է թողել։ իսկնորա օրէնքը այս է։ այնպէս կատարեալ լինել, ինչպէս որ իւր երկնաւոր Հայրը կատարեալ է։ ուբեմն իւր վսեմ նշանակութիւնը, որ ունի աշխարհիս վերայ, գործով ցոյց տայ, այս ինքն է, տէր լինի երկրիս եւ մի օր իւր երկնաւոր Հօր պայծառութեանն մօտենալով երկնքի բնակութեանն հասնի։ Մեր մարմնի մէջ բնակող կենդանական ուժերը բանական հոգին պէտք է սանձի անմաքուր ցանկութիւնները զսպի, նորա աչքը պիտի լինի ուղղած միայն գէպի իվեր իւր Աստուածը եւ հոգիների աշխարհի վերայ, այն հոգիներին, որոց ընկերն է եւ ինքն։ Նորա օրէնքն է խղճմանքը, գէպի կատարելութիւն դիմելու ջանքն ու փափագը, չար բանը ատելը եւ անարգել ձգտումն գէպի ի ազատութիւն։ Եթէ որ իւր կենդանական բնութեան հետ պատերազմելու ժամանակը յաղթուի ու նորա իշխանութեան տակը ընկնի, ինքն իւր աչքում արհամարհելի եւ ողորմելի կդառնայ։ Որովհետեւ աշխարհիս կարգի մէջ ամենայն բան մի շղթայի օղակների նման մինը միւսի հետ կապուած է, ուրեմն եւ իւր հետեւանքը ունի հարկաւորապէս։ Մեղք եւ անկատար բանը պէտք է ծնի անշուշտ ցաւ։

Մարդու մեղիք մէջ ընկնելու ու հորչված համար սահմանութիւնը զէ, այլ երջանիւննեան ու կտրաբելուննեան։ Հաստատ կամքովն ու Աստուծոյ վերայ իւր յոյսն ու վստահութիւնը գնելով կարող է նա իւր կեանքի ամեն հանգամանաց մէջ այս ինքնակատարելութեանը ջանքով համնել։ Յաւն ու չարիքն անգամ նորան ճանապարհ ցոյց տռւողներ են դէպ ի երջանկութիւն։ Ահա այս է նախառահմանուննեան կամ վերին ունաց-նիւն։

Ուրեմն ինչ եւս որ մեզ պատահի, ինչ վիճակների մէջ եւս որ գտնուելու լինինք, — մենք կախումն չունինք այն պատահ-մունքից, մեր այլ եւայլ տեսակ փոխուող վիճակից ու դրութիւնից, եթէ որ մենք այն ենք, ինչ որ պէտք է լինինք, այսինքն Քրիստոսի աշակերտները։ Մեր օրտին շատ մօտիկ, շատ սիրելիքը կարող են մեռնել բայց մենք մեր ունեցած կորուսովը այն ժամանակ ենք միայն անքաղզ, երբ որ կմոռանանք, որ մենք ու նոքա հոգիների արքայութեանը անդամներն ենք, որ մենք նոցա կորցնել չենք կարող, որովհետեւ հոգիներ են։ որ մենք ոչ մի անցաւոր բանի այնպէս բոլոր սրտով չենք կոչչիր, իբր թէ անանց ու յաւիտենական բան լինէր։ — Նոցա մարմնաւոր մահը երկրաւորի կարեւոր հետեւանքն էր։ իսկ մեր օրտի ցաւը այդ մասին աշխարհային բանին մեր օրտով սասաիկ կպած լինելու հարկաւոր հետեւանքն է։ Աստուծոյ ամենայն նախաստհմանութիւններն եւս բարերար են ու բարի նպատակ ունին մեր համար, կզօրացնեն մեզ աւելի, կպայծառացնեն մեր սիրտն ու հոգին Աստուծոյ քաղցրութեամբ, կամ նորա սաստկութեամբն դէպ իւլիք կմղեն մեր բանականութիւնը, որ ճանաչենք Աստուծածայինը։ Պատերազմներն ու կոտորածները, քաղցն ու թշուառութիւնը, հիւանդութիւններն, կողոպտուիլը, կրակը Աստուծոյ նախասահմանութիւններն են, վերին տեսչութեան տնօրէնութեամբն կլինին։ Այսպիսի ձախորդութիւններն մի մեծ ու առանձին նշանակութիւն չունին, որովհետեւ այս ամենը երկրաւոր, անցուառոր, կորչելու, ոչնչանալու բաների կորչելն ու ոչնչանալն են ցոյց տալիս։ Բայց այս ամենը ցոյց են տալիս մեզ յաւիտենական բանը, որ մեր մէջը, մեր սրտումը աճումէ։ Քո ողբ ու լացդ ձախորդութիւններիդ մասին Աստուծոյ նախասահմանաւթեան մէջ, վերին տեսչութեան տնօրէնութեամբն մէջ

կար: Այսուհետեւ վասն զի քո իսկ անկատարութեան կարեւոր հետեւանքն էր: Բայց իմաստուն մարդի հոգւոյ հանգստութիւնը, որտի անվրդով խաղաղութիւնը ամենայն անբաղդութիւնների մէջ, իւր հոգւոյ մեծութեան եւ յաղթող զօրութեան կարեւոր ու անուրանալի հետեւանքն է: Որչափ ո՞ւ սս-ըն է մէջ սիրու ու հոգին, այնչափ առ-էլի հօդ էն+ Ասուն-ծոյ: և ո՞րշափ ո՞ւ Ասուն-ած հօդին է մէջ, այնչափ աղաղա-ած էն+ մէն+ այն սս-ժից, ո՞ւ աշխարհն իարու էր մէջ վերայ բանեցնել:

Այսպէս լուծվում են, պարզվում են մեր աչքի առաջին մեզ երեւած ամենայն հակառակ բաները ամենափառաւոր կերպով եւ մենք տեսնում ենք, որ ոչ միայն ներհակ չեն միմեանց, այլ հիանալի համաձայնութիւն կայ ամեն բանի մէջ: Ամենայն բան մեր բարոյն պէտքէ ծառայի, ամենայն բան մեր համար է, վասն զի Աստուած մեր համար է: Աստուծոյ նախասահմանութիւններն իմաստութեամբ են, արդարութեամբ, ու բարի են միանդամայն. մեզ անկամք գերիներ անելու համար չեն, այլ ընդհակառակն մեր բանական հոգւոյն աւելի բարձր աղատութիւն տալու համար. վերին տեսչութեան առաջուանից սահմանուած տնօրէնութիւններն լինում են եւ ծանրանում մարդիս վերայ, որ նորան դէպի Աստուածայինը բարձրացնեն տանեն: Ո՞հ, չնչ անհանձնառ մէջ հարսան-նիւն սս-նենալ է հարդիս համար Ասուն-ած ու Ասուն-ծոյ լինուու-նիւնը ճանաչվէլը: Ի՞նչպէս անքննելի են նորա դատաստանները եւ անհասանելի նորա ճանապարհները:

(Թարգմ.)

Գ. Ե. Ա.

Ակնարուժական հիւանդանոցի մէջ փոքրիկ սենեակ մի: Հիւանդանոցը գտնվում է Պէտէրբուրգի կենդրոնում, բազմամարդ փողոցներից մէկին մէջ. բայց փոքրիկ սենեակը բարձրագոյն յարկումն է և լուսամուտները բակն են նայում, ուստի փողոցի աղմուկը այնտեղ գրեթէ չէ հասնում: Երեկոյ է: Խորին լուսութիւն: Լուսամուտների կրկնակի սև վարագոյնները, բարձր և մերկ պատերը, սենեակին համարեա մէջը ցցված հին մէծ վառա-